ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 51

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը՝ *ո ր ո շ ու մ եմ*

1. Վալերիկ Դովլաթյանի սեփականություն հանդիսացող բնակելի տանը /վկայական 1480469 , տրված 01 օգոստոսի 2003թ./ տրամադրել Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնք, գյուղ Հանքավան 1-ին փողոց 15-րդ հասցեն :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՌԼԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 09-ին
գ.Մեղրաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 52

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը և Աղասի Մարգարի Մեխակյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 3-րդ փողոցի թիվ 8-րդ հասցեում գտնվող Աղասի Մարգարի Մեխակյանի սեփականություն հանդիսացող 0.399 հա բնակելի կառուցապատման /վկայական 31012018-07-0053, տրված 31 հունվարի 2018թ./ հողամասի մասը կազմող 0.1769 հա բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել Մեղրաձոր համայնք, գյուղ Աղավնաձոր 1-ին փողոց, թիվ 9-րդ հասցեն:

2. Մնացած բնակելի կառուցապատման 0.2176 հա հողամասի հասցեն թողնել նույնը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՌԼԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 12-ին
գ.Մեղրաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 53

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կատավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8,1-10,11,12,13 -րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աղասի Մեխակյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղի 3-րդ փողոց 8-րդ հասցեում գտնվող (վկայական N 31012018-07-0053, տրված 31 հունվարի 2018թ.) 0.399 հա հողամասում կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում,ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջով և հինք ընդունելով Աղասի Մեխակյանի դիմումը՝ *ո ր ո շ ու մ ե մ՝*

1.Աղասի Մեխակյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 3-րդ փողոց 8-րդ հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառուցված

1) 36.08 ք.մ. <<ինքնակամ նկուղ>>
2) 37.66 ք. մ. <<ինքնակամ ավտոտնակ>>
3) 20.21 ք. մ. <<ինքնակամ կիսանկուղ>>

Ընդհանուր 93.95 ք.մ. մակերեսով համարել օրինական, հիմք ընդունելով << Արտէդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը,

2. Աղասի Մեխակյանի սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 1-ին փողոց 9-րդ հասցեում գտնվող ինքնակամ կառուցված

1) 16.16 ք.մ. <<ինքնակամ անասնաշենք>>
2) 40.69 ք.մ. <<ինքնակամ ավտոտնակ>>
3) 9.92 ք.մ. <<ինքնակամ հավանոց>>
4) 45.39 ք.մ. <<ինքնակամ տնտ. շինություն>>
5) 13.17 ք. մ. <<ինքնակամ հարթակ>>

Ընդհանուր մակերեսով 125.33 ք.մ. մակերեսով համարել օրինական հիմք ընդունելով <<Արտէդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը,

3. Պարտավորեցնել Աղասի Մեխակյանին Մեղրաձոր համայնք Աղավնաձոր գյուղ 3-րդ փողոց 8-րդ հասցեում գտնվող 93.95 ք.մ. ինքնակամ շինությունների օրինականացման համար վճարել 62007 դրամ,

4. Պարտավորեցնել Աղասի Մեխակյանին Մեղրաձոր համայնք Աղավնաձոր գյուղ 1-ին փողոց 9-րդ հասցեում գտնվող 125.33 ք.մ. մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման համար վճարել 82717 դրամ;

5. Գումարները փոխանցել Կոտայքի մարզ Մեղրաձոր համայնք Աղավնաձոր գյուղի 900125000019 հաշվեհամարին,

6. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՌԼԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 13-ին
գ.Մեղրաձոր